

Թ Ե Թ Ե Ի Մ Ա Ն

Վ. ՋԱԳԱԵՎԱԳԻ

Ժամկոչ Վասիլը շատ հիւանդ է, կրծքի ծակոց ունի։ Կպցրել էին սղորուկ և ուղարկել են զինու հոսեից, ոչինչ չի՝ օգնում։ Ղրկել է իմ հոսեից արդէն տարածամ երեկոյեան իր Գրինկային։

— Եկէ՛ք, — ասում է, — հայրս ցանկանում է մի անգամ էլ իր մահից առաջ տեսնել ձեզ, և ուզէ՛ կամենում են բան ասել ձեզ, չը գիտեմ։

Ես գնացի։ Ճանապարհը ծածկած էր ձիւնով՝ հաւասարած ցանկապատերին, ուստի մենք գնում էինք կածաններով՝ ազարակների ետեւից։

— Շատ հիւանդ է, — հարցնում եմ ճանապարհին Գրինկային։

— Մահացու — ասում է — ու՛ գիտէ, կ'ապրի՞ մինչ էգուց։

— Իսկ կտու՞ արե՛ւ է։

— Արել են, բայց անարդար։ Խորթ մօրս ամեն բանից բաւականաչափ էր գրել, իսկ մեզ քրոջս հետ՝ զրկել։

Նա մանրամասն պատմեց ինձ, ինչ է հայրը կտակել իրան և քրոջը և ինչ խորթ մօրը ու նրա զաւակներին։

Գուրս էր գալիս, որ խորթ մայրը իր երկու երեխաների հետ ստանում է ընդ ամէնը մի երրորդական մասը։ Ես ասացի Գորինկային, որ այստեղ ո՛չ մի անարդարութիւն չեմ նկատում իր և իր քրոջ նկատմամբ։ Աւելի խորթ մայրը կարող է զրկուած համարել իրան, քան թէ նրանք։

— Բայց սակայն չէ՞ որ խորթ մայրս իրան հետ ոչինչ չէ բերել մեր տունը, — բողբոջեց Գրինկան։ — Ամբողջ կարողութիւնը մեր հօրն ու հանգուցեալ մօրս է։ Մենք եկանք խրճիթը, խրճիթը հին է, ցածր։ Վառարանը բռնում է ամբողջ տաքածութեան կէսը։

Վառարանի վրայ մեկնուած էր փոքրիկ աշակերտը և եռանդով ինչ — որ ճգմզում

էր զրատախտակի վրայ։ Խանութի վրայ, վառարանի ետեւը պառկած է Վասիլը, ծածկուած մի հին քուրքով։ Անկողնու վրայ կախած էր ձողիկը¹, իսկ նրա վրայ քցած՝ մի բոլորովին նոր քուրք, բաճկոն ու մեծ աղուխ։ Կինը իր մանկան հետ նստած էր վառարանի մօտ, իսկ Օսաննա աղջիկը սրբում էր գդալները. երեւում է նոր էին ընթրել։ Ես մօտեցայ անկողնին և բարեւեցի հիւանդին։ Նա մեկնեց ինձ իր դողողուն ձեռքը և ուզում էր ժպտալ, ինչպէս սովորաբար ժպտում էր նա, — բայց անկարող եղաւ նա։ Եւ ճգնեց ժպտել՝ բայց արտայայտեց ցաւ ու թախիծ։

— Դուք հիւանդ էք, Վասիլիյ, — խօսք բաց արի ես, — նստելով հիւանդի մօտ։

— Ախ, հիւանդ եմ, շատ հիւանդ ... Ժամ է, ժամ է պատրաստուել ... Իսկ այստեղ կաշում են ինձանից՝ կարողութեանս պատճառով ... չեն տալիս հանգրստութիւն ... Նա իրան է քաշում, նրանք — իրանց։

Նա խօսում էր ընդմիջելով, ծանր է շնչում և հազում էր գրեթէ իւրաքանչիւր խօսքի վրայ։ Յետոյ մի քանի անգամ ծանր շունչ քաշեց, մեկնեց ձեռք դէպի ինձ և նորէն սկսեց խօսել դանդաղ, կաղզ առնելով, համարեա՛ հազիւ լսելի ձայնով։

— Լաւ է, որ դուք եկաք ... Խնդրանք ունիմ։ Ձեզ կը լսեն ... Թո՛ղ ինձ թաղեն հին գերեզմանոցում ... կաղնիի մօտ ... Նոր գերեզմանատանը չեմ ուզում ... տխուր է այն ... միայն հողակոյտեր են ... Իսկ այնտեղ՝ խոշոր ծառեր ... ամառը թռչնիկները ...

Ես խոստացայ կատարել նրա կամքը։

— Բայց առ այժմ, — ասում եմ, — դուք մի՛ մոտձէք մեռնելու վրայ, դուք է՛ի վեր կը կենաք։ Տկարութիւն կը քաշէք և վեր կը կենաք։

Վասիլը ձեռքով շարժում արեց։

1. Բարակ և երկայն փայտ։

Կամօթ. թարգմանելի։

— Կորաւ, — ասում է, իսկ մի վայրէկանից յետոյ աւելացրեց. — զի՞ք մէկ է! Եկատե՛լով, որ խօսակցութիւնը դառնում է նրա համար տանջալից, ես հետացայ և նստեցի դուքանին՝ Լուսամուտի մօտ: Խրճիթ մտան եկեղեցու երէցփոխը և երկու ուրիշ մարդիկ: Նրանք հարեանաներ են: Նրանց կանչել էր կիներ, որպէս զի խնդրեն նրա համար:

— Փառք Յիսուս Քրիստոսին!

— Պատիւ յաւիտեանս յաւիտենից!

— Դեռ ուշքը տե՛ղն է, — հարցրեց կէս ձայնով երէցփոխը:

— Յիշողութիւնը տեղն է, — պատասխանեց կիներ:

Երէցփոխը բարեւ տուեց հիւանդին, յետոյ կոխեց ձեռքը քուրքի տակ և շօշափեց ոտները:

— Ոտներդ պաղ են: Կը մեռնէք, քաւոր: Երբ ոտները պաղում են, իսկ աչքերը ընկնում գլուխը (զագաթը) — չկայ փրկութիւն: Պէտք է մեռնել:

Հիւանդը ուշադրութեամբ նայեց երէցփոխի վրայ, յետոյ շնչաց հազիւ լսելի.

— Դի՛ք մէկ է!

— Ներենք իրար, — քաւոր վասիլի, — ասաց երէցփոխը և բռնեց հիւանդի ձեռքը:

— Աստուած ձեզ ներէ, Աստուած ձեզ ներէ, Աստուած ձեր մեղքերին թողութիւն շնորհէ, — ներեցին իրար ըստ սովորութեան երեք անգամ: Նոյն ձեռով ներումն կատարուեց երկու ուրիշ հարեանների հետ, որոնք եկել էին երէցփոխի հետ: Նոյն կերպով իւրաքանչիւրը նրանցից շօշափեց հիւանդի ոտները, գլուխը տարուբերեց տխրութեամբ և գուշակեց մօտալուտ մահը:

Հիմա մօտեցաւ հիւանդի անկողնին կիներ: Նա դեռ եւս չէ արտասել, բայց արդէն վաղօրօք մօտեցրել է աչքերին ձախ ձեռք զոգնոցով, որպէս զի պատրաստ ունենայ, իսկ աջով բռնելով հիւանդի ձեռքը՝ սկսեց մրմնջալ:

— Ախր, դու ո՞ւմ վրայ ես ինձ թողնու ... ում ... մատաղ տղաքներով հետ ... Հապա ես, խեղճ կիւնարմատս, նրանց հետ

նր գնամ: Հապա ես գլուխս ո՞ւր դնեմ: Ո՛չ խրճիթ, ո՛չ մի անկիւն սեփական:

— Ախր, չէ ես քեզ կտակել եմ շտեմարանները, — պատասխանեց վասիլը: — Կայ ագարակներ, կը շինես խրճիթ, է՛լ ինչ ես ուզում ինձանց:

— Դէ տուր էլի ինձ թէկուզ սօսինները, գետի վրայ, որպէս զի ես ինձ համար մի ո՞ր և է գոմ կանգնեցնեմ, թէ չէ՝ տեղ չեմ ունենալ կովերին տեղադրելու:

— Ես ձեզ կը տամ սօսինները, — պուսաց Գրինկան, որ մինչ այդ լուռ կանգնած էր շնին: — Ատամներդ դուրս կը թռչեն: Միթէ դո՞ւք էք տնկել սօսինները: Կամ ձեր հայրը: Սօսինները շտեմարաններին միայն, հասկանո՞ւմ էք. այն էլ էք վերցնում, ո՞վ գիտէ, ինչո՞ւ համար:

— Լո՛իք, տխմար, — ընդհատեց երէցփոխը, — այստեղ հայրը նրա համար է, որ կարգադրութիւն անէ, ոչ թէ դու:

— Տեսնում էք, տեսնում էք, բարձր մարդիկ, — աղաղակեց կիներ, — դեռ հայրը կենդանի է, յետոյ ինչպէս պիտի վարուի հետս: Թո՛ղ միայն հայրը աչքերը փակէ, է՛լ այն ժամանակ դուրս կը վռնտէ խրճիթից, շէմքին մօտ չի թողնի: Այդպէս հա, այդ էլ իմ բարեսրտութեան համար, իմ աշխատանքի, իմ հոգածութեան համար! Նա աչքերը փակեց զոգնոցով և շարունակեց գանգատուել:

— Ո՛հ, թոյլ տուէք ինձ հանգիստ մեռնեմ, — աղաչում էր վասիլը. — ա՛խ, ա՛խ:

— Ո՛չ, քաւոր վասիլի, — միջամտեց երէցփոխը, — այդ չարժէ: Քանի որջ էք, դուք պարտական էք տնօրինել ինչպէս պէտք է, ապա թէ ոչ՝ յետոյ պիտի վրձնեն ու անհանգիստ անեն գերեզմանում ձեր ոսկորները:

— Այո՛, այո՛, — հաստատեցին երկու հարեանները:

— Էդ, — շարունակեց երէցփոխը, — վիրաւորանք է կնիջը համար: Գրինկան ու Օհասնանս ստացել են շատ — շատ, իսկ նա՝ քիչ: Ես խնդրում եմ ձեզ, քաւոր, և ահա հարեաններդ էլ նոյնպէս խնդրում են, պուէ՛ք կնիջը այն սօսինները:

Խորհիթը մտաւ մի օրիորդ մօտ յիսուն տարեկան: Այդ հիւանդի ընդուն է: Մե. լանկան եկել էր Թողութիւն խնդրելու եղբորից: Թողութիւն խնդրեց երեք անգամ, նստեց նրա մօտ և սկսեց տնտնալ:

— Եղբայր իմ սիրելի, միակն ես իմ և դու ել ինձ Թողնում ես: Ո՛րք ես դու ինձանից հեռանում:

— Մի՛ քօքուիլ, Մելանկա, ասեց եւ ընցփոխը, — ախր դեռ նա չի՛ մեռել: Երբ եկել էք, ուրեմն նստեցէք մարդկանց մօտ, իսկ մինը ձեռն աղաղակը լսել չենք կամենում:

Մելանկան համբուրեց հիւանդի ձեռք:

— Եղբայր Վասիլի, — սկսեց խնդրել, — տուէ՛ք ինձ այս հին քուրքը: Դուք երկու հատ ունիք, իսկ ես այնքան աղքատ եմ, այնքան ցուրտ եմ զգում, նայեցէ՛ք, ձեռք դաժան, իսկ ես՝ ամառուայ ...

— Չեմ կարող, ընդրա, — տնքաց Վասիլը, — Օհանսին պէտք է ... Օխ, օխ... Կինը բռնեց Մելանկայի Թիկունքից:

— Մի՛ զուլսը տանէ՛ք հիւանդի, այլ գնացէ՛ք նստէ՛ք լուսամուտի մօտ:

Մելանկան յետ նահանջեց, կանգնեց դրան մօտ և սկսեց զանգատել. այդպէս է այժմ աշխարհումս: Եւ բաժանութեան մէջ էլ ինձ զրկեցին, չը տուեցին ամբողջ բաժինս, ինչ որ հօրիցս յետոյ ինձ հասնում էր և այժմ մի հին քուրքն էլ են խնայում: Այդպէս: Աստուած ամեն բան տեսնում է!:

Վասիլը պառկած էր մէջքի վրայ՝ աչքերը յառած առաստաղին, յետոյ՝ դարձեց ամենքի վրայ և պօռնեց շարժեց: Երեցփոխը աւելի մօտ եկաւ և հարցրեց. ինչ է կամենում ասել:

— Սօսիններ հաւասար կիսել, — շշնջաց հիւանդը:

— Սօսիններ կիսել, — բարձրաձայն կրկնեց երեցփոխը:

— Նշանակում է, կէսը ձեզ, — բացատրեց հարեանը կնիքը, — իսկ կէսը՝ Գրիկկային:

— Այդպէս լաւ է, ոչ ոք չի՛ զրկվում, — համաձայնեց միւսը:

Կինը բերեց պահարանից կանաչ շիշը՝ և սկսեց հիւրասիրել երեցփոխին և հաւանանքին, իսկ Վասիլը, երեսը շուռ տալով պատին՝ հոգին աւանդեց:

Միւս օրը վաղ առաւօտեան զանգակնեւրը զօղանշում էին նրա համար: Ասում էին, որ նրա մահը եղել է Թեթիւ:

Ռուս. Թրգմ. ԱՅՏ. ԲԵԿ-ՅՈՎԱԿԻԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՕԹԱՆԵՐ

Փարպեցիմ զրոց գիւտի վրայ խօսելով՝ կ'ըսէ, թէ Ս. Մահակ « եղիալ կատարելապէս հմուտ երգչական տառին, հեռոտրակամ յորդասաց յայտնաբանութեամբ, եւս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցմ ցուցանիր »:

Դ՞նք կը մշամակէ երգչական տառ: Ամբողջ տ'է ձայնաւոր (վասմ զի անտեղի է հայրապետ մը զովն՝ ձայնաւոր տառերը ջանջմալում համար) այլ անտարակոյս յօթանք. այսպէս կը հասկնամ Փարպեցիոյ ըմբօքցողմերէն շատեր՝ եզրակացնելով թէ Ե. զարու մէջ մօթամեր ունէինք (յաշաւտոր ճարձմեցիէն շատ առաջ) և հիւսնայով միաժամանակ՝ բացատրութեամբ ճշգրութեամբ վրայ. յիրարի տառը մայմեր կը մերկայացնէ՝ ճիշդ այնպէս ինչպէս յօթանք, և եթէ հարկ ըլլայ վերջինս թարգմանել՝ ամբողջտ ամենալաւ բառն է երգչական:

Այս ամէնը սակայմ՝ սխալ ըմբօքցմամբ մը վրայ հիմնուած է. Փարպեցիմ այդ տեղւոյն մէջ կը գովէ Ս. Մահակայ յաճախելու Օկաւտամբ ունեցած հմտութիւնը. « Ոչ լինէիմ (թարգմանիք մեր) քաւակում ի վճարել անսխալ ուղղակի՝ առանց առաջմորդելոյ մոցա սրբոյ հայրապետիմ Մահակայ, որ յոյժ աղցեցալ անցուցանէր վարժիք զբազում գիտնովք Յունաց, եղիալ կատարելապէս հմուտ երգչական տառին և հեռոտրակամ յորդասաց յայտնաբանութեամբ, եւս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցմ ցուցանիր »:

Փարպեցիմ չէր կարող Ս. Մահակայ երաժիշտ ըլլալ իրերի փաստ բերել յունարէն լեզուի ունեցած ամենայլ հմտութեամբ. և յետոյ յօթանքեր իմէ կապ ունիմ յաջորդ հեռոտրութեամբ և փիլիսոփայութեամբ հետ. հետեւաբար խնդրական բառը պէտք է սրբագրել:

« Եղիալ հմուտ երգչական տաղիցմ »:

Ս. Մահակ, ըստ Փարպեցիոյ տեղեկակ էր Յունաց (եկեղեցական) երգերում և բանաստեղծութեանց, հեռոտրութեամբ և փիլիսոփայութեամբ:

Նա այս երեքը կը յիշատակէ՝ ցոյց տալու համար թէ Ս. Մահակ միշտ յունական պատմութիւններ հասկնալու կարող չէր, այլ ասեւ աւել բարձր և դժուարամասնելի գիտութիւններ. ըստ այսմ՝ « երգչական տառ » ըմբօքցմամբ հետ՝ սրբագրելի եմ մաեւ ամոր վրայ հիմնուած բոլոր եմթարդութիւնները՝ չայոց հիմ երաժշտութեամբ մասիմ:

Հ. Կ. Տ. ՍԱԼԻԱՆԵՍ

1. Մի տեսակ խմբի է: — Ծամ. Թարգմ.